ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«12» 04 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ- 0072-21

Ձեռնարկողը՝ ***«Արոսա» ՍՊԸ***
Ք Երևան, Ոսկեհատ փող. 31/4

Գործունեությունը՝ ***Ն. Գեղաշեն բնակավայրի թիվ 1 միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0072-21

<12> 04 2021թ.

Ներքին Գետաշեն համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Արոսա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ,Ներքին Գետաշեն համայնք

Ներածական մաս. Նախատեսվում է Գեղարքունիքի մարզ Ներքին Գետաշեն համայնքի թիվ 1 դպրոցի նոր մասնաշենքերի կառուցում: Դպրոցը գտնվում է Ներքին Գետաշեն համայնքի դպրոցի թաղամաս 2-րդ փողոց N4 հասցեում: Գործունեությունը իրականացվելու գոյություն ունեցող դպրոցի տարածքում քանդելով հին շինությունները:

Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը իրականացվել է գործող նորմատիվ փատաթղթերի պահանաջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել ժամակակից լուծումներով տիպարային դպրոց:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Դպրոցը տեղակայված է Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղում, կառուցվել է 1969 թվականին: Դպրոց հաճախող աշակարտների փաստացի թիվը՝ շուրջ 900: Դպրոցը գերծանրաբեռնված է, աշխատում է երկհերթ գրաֆիկով: Հողամասի մակերեսը 1.07 /հա/: Ներկա դպրոցը բաղկացած է 3 հիմնական մասնաշենքերից՝ եռահարկ ուսումնական մասնաշենք շուրջ 1700 քմ մակերեսով, միահարկ սպորտային և հանդիսությունների դահլիճների մասնաշենք շուրջ 500քմ մակերեսով և Գեղարքունիքի մարզպետարանի պատվիրատվությամբ 2018 թվականից կառուցվող «Գողթն» ՍՊԸ կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարության ՔՆ ԲԸԱՀԱՇՁԲ 15/32 պայմանագրով նախագծված երկհարկանի ուսումնական մասնաշենք շուրջ 1700.0քմ մակերեսով 260 աշ/տեղով:

Գոյություն ունեցող մասնաշենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության արդյունքներով և գոյություն ունեցող շենքերի վնասվածության և ֆիզիկական

ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՍՏՈՒԳԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

մաշվածության տվյալների հիման վրա կազմված ծախսերի հաշվարկներով նպատակահարմար է կազմաքանդել առկա մասնաշենքերը և մշակել նոր կառուցվող մասնաշենքեր՝ արդի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ համակարգի լուծումներով:

Սույն նախագծով նախատեսվում է միջնակարգ դպրոց III-րդ աստիճանի, 1-ից 12-րդ դասարանների կազմով, 936 աշակերտ տեղի համար:

Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի (նոր մասնաշենքերի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներին հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 07.05.2020թ. N 709-Ն որոշումը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2020 թվականի մայիսի 21-ի N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/48 պայմանագիրը, Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի ղեկավարի կողմից 2020 թվականի օգոստոսի 17-ին տրված N25 ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը, «Վեոլիաջուր» ՓԲԸ կողմից տրված Ջրասնուցման և կեղտաջրերի հեռացման տեխ. պայմանները, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գազաֆիկացման տեխ. պայմանները, «Հայէլցանց» ՓԲԸ «Գեղամա» մ/ճ կողմից տրված էլ.էներգիայի մատակարարման տեխնիկական պայմանները:

Նախագծի ծավալատարածական լուծումները պայմանավորված են առկա նոր կառուցված տարրական դպրոցի 1-4 դասարանների մասնաշենքի և տաքանցումի հատակագծային լուծումների պահպանման և ֆունկցիոնալ կապի ստեղծման հնարավորությունից: Ուսումնական պրոցեսի գոտիավորման նպատակով նախատեսվել են 6 մասնաշենքեր: 1-ին մասնաշենքը նոր կառուցված երկհարկանի 2025 քմ ընդհանուր մակերեսով շինություն է, որտեղ տեղակայված են տարրական դպրոցի 1-ից 4-րդ դասարանները /12 դասասենյակ/: 2-րդ մասնաշենքը 1430 քմ ընդհանուր մակերեսով եռահարկ շինություն է՝ ավագ դպրոցի ինը դասասենյակներ և երեք օտար լեզուների մասնագիտացված կաբինետներ: 3-րդ մասնաշենքը 1160 քմ ընդհանուր մակերեսով եռահարկ շինություն է, նախատեսվել է վարչատնտեսական և բժշկական շենքերի, հավաքավայրի /ֆորում/, գրադարան-տեղեկատվական կենտրոնի, 2 մասնագիտացված և 2 անհատական պարապմունքների /մեթոդական/ կաբինետների համար: 4-րդ մասնաշենքում տեղակայված են համադպրոցական շենքերը՝ ճաշարանը՝ 216 նստելատեղով, հանդիսությունների դահլիճը՝ նախատեսված 220 հանդիսատեսի համար, և գեղագիտական դաստիարակության՝ գծագրության-նկարչության խմբակը: Մասնաշենքը եռահարկ է՝ 1490 քմ ընդհանուր մակերեսով: 5-րդ մասնաշենքը նույնպես եռահարկ է՝ 2510 քմ ընդհանուր մակերեսով, նախատեսված միջին և ավագ դպրոցի մասնագիտացված կաբինետների համար՝ 12 դասասենյակ, 3 բնական գիտությունների մասնագիտացված, համագարգչային և տեղեկավական տեխնոլոգիաների կաբինետներ, ուսումնամարզական բլոկի հանդերձարանները: 6-րդ մասնաշենքը՝ 15x24 մ առանցքային չափերով, 390 քմ ընդհանուր մակերեսով, 6.5 մ բարձրությամբ մարզադահլիճ է:

Հողամասում նախատեսվել են հետևյալ հիմնական գործառնական գոտիները՝ ուսումնական, հանգստի /շարժուն խաղերի հարթակներ տարրական դպրոցի աշակերտների համար (2-4 դասարաններ), պասիվ հանգստի հարթակներ հիմնական դպրոցի աշակերտների համար/: Պատերը նախատեսված են ինքնակրող, բազմաշերտ, թեթևաբետոնե բլոկներով կամ միաձույլ ե/բ: Ջերմամեկուսացումը նախատեսված է երշերտ հանքային ROCKWOOL 100 մմ ВЕНТИ БАТТС Д սալերով: Երեսապատումը խարսխային հատվածներում՝ բազալտե սալիկներով գույնը՝ RGB 174-170-170, հիմնական պատերը՝ ֆիբրացեմենտային LATONIT 8մմ սալերով գործարանային ներկապատումով, գույնը՝ Բաց կավագույն Светлая глина 1020-Y40R, RAL 9001 կամ 1015, որոշակի հատվածներում տրավերտինե սալիկներով գույնը՝ RGB 255-246-225: Միջնորմները նախատեսված են թեթևաբետոնե սալիկներով՝ 60: 100; 200մմ հաստությամբ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՔԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ФИЛИАЛ ГОСУДАРСТВЕННОГО ОБРАЗОВАТЕЛЬНОГО УЧРЕЖДЕНИЯ РА ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER SNCO * RA YEREVAN STATE UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շենքի պատերի, առաստաղների ներքին մակերեսների հարդարումը նախատեսած է գաջի սվաղ, պատված լատեքսային ներկով, գույնային երանգների առաջարկություններով:

Թեքուղիների և սանդղահարթակների երեսպատատումը՝ բազալտե 40մմ հաստությամբ սալիկներով:

Միջանցքների հատակները նախատեսված են երեսպատել չսահող մամլագրանիտի սալիկներով, դասասենյակները և լաբորատորիաները՝ վինիլային, հետերոգեն սպորտային ՊՎՔ 2.0մմ հաստությամբ, մարզադահլիճը՝ հետերոգեն սպորտային ՊՎՔ 4.5մմ հաստությամբ դասը՝ 34/43, հանդիսությունների դահլիճը՝ կավրոլին 6.5մմ հաստությամբ դասը՝ 33, սանհանգույցները՝ խեցեսալ: Սանդղահարթակներն ու սանդղաբազկի հատվածները երեսպատել աստիճանների համար նախատեսված չսայթաքող մամլագրանիտով, սայթարգել ներդիր էլեմենտով:

Պատուհանները նախատեսված են ալյումինե ջերմակամրջակով, ջերմախնայող ապակեփաթեթով /առկա շենքին համապատասխան/, արտաքին դռները՝ ալյումինե պրոֆիլով, ջերմակամրջակով, ջերմախնայող ապակեփաթեթով: Ներքին դռները՝ ջրակայուն շերտավոր փայտից առանցքային շրջանակով, պենոպոլիստիրոլ միջուկով, 1.5 մմ հաստությամբ ՊՎՔ երեսապատման շերտով, առանց շեմի: Տարահանման ուղիներին գտնվող դռները և վիտրաժները նախատեսել հրակայուն համաձայն ՀՀ շինարարական նորմերի (EIS60, E60):

Ուսումնական մասնաշենքերի տանիքները նախատեված են փայտյա ծպեղներով, ծածկը ցինկապատ տրամատավոր թիթեղից, սպորդահլիճի հատվածում՝ սենդվիչ պանելներից, գունային RGB/RAL 120-136-125/ 7003 կամ 194-62-40 2002 49/24550 երանգով:

Ջրամատակարարման և կոյուղու նախագիծը կատարված է ըստ ճարտարապետական և տեխնոլոգիական առաջադրանքի և համաձայն գործող շինարարական նորմերի և տեխպայմանների: Նախագծով նախատեսված է սառը ջրամատակարարման ցանց, կենցաղային կոյուղու ցանց:

Օբյեկտի ջրամատակարարումը իրականացվում է նախկինում նախագծված գործող d=80մմ ջրագծից, ներմիացումը կատարել ՋՀՀ-1 նոր կառուցված հորում Φ110 խողովակին.

Արտաքին ցանցը մոնտաժվում է պոլիէթիլենային բարձր ճնշման խողովակներից Φ75, 63մմ արտաքին տրամագծով: Խրամուղու մեջ խողովակները անցկացվում են 1.6մ խորության վրա:

Դպրոցի շահագործման ընթացքում առաջացող կենցաղային հոսքաջրերի մաքրումը իրականացվելու է FBR-20 տիպի մոդուլային կենսաբանական մաքրման կայանում:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

- տարածքի ընդհանուր մակերեսը – 10700 քմ,
- կառուցապատման խտությունը – 0.87,
- կառուցապատման տոկոսը – 74 %,
- կառույցի զբաղեցրած տարածքը – 35.2 %,
- կանաչապատման մակերես – 2700 քմ,
- ուսումնական շենքեր – առկա- 2025քմ,
- նախատեսվող – 6978.9քմ:

Տիպարային դպրոցի կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 25 ամսվա ընթացքում: Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 46 մարդ:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատումը կիրականացվի տեղանքին բնորոշ ծառաթուփային բուսականությամբ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նախատեսվող գործունեության շինարարության ընթացքում կառաջանա կենցաղային աղբ՝ 48*70*1.5=4830 կգ/շին.ժամ և շինարարական աղբ՝ 4870տ, այդ թվում գոյություն ունեցող դպրոցի քանդումից առաջացող: Շինաղբը անմիջապես կբարձվի ավտոինքնաթափերը և կտեղափոխվի համայնքի հետ համաձայնեցված վայր:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առընչվում մշակութային հուշարձանների և պահպանության ենթակա տարածքների հետ:

Գործունեության ենթակա տարածքում Կարմիր գրքում գրանցված կենդանիներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

-շինարարական աշխատանքների /փոշի առաջացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ ջրցանի իրականացում,

-պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

-ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

-տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին,

-շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

-շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,

-շինարարական տեխնիկան կսպասարկվի տարածքից դուրս մասնագիտացված կետերում,

-աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարկան թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի:

-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

-շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն և Գեղարքունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ
РА ЕРЕВАН
RA YEREVAN

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

-Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արոսա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Ներքին Գետաշեն համայնքի թիվ 1 դպրոցի նոր մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան